

Նկարագրություն

- Սպիտակ անփայլ
- Օժտված բարձր ծածկողականությամբ
- Կայուն քերծվածքների, հարվածների նկատմամբ
- Կայուն եղանակային փոփոխությունների և ուլտրամանուշակագույն ճառագայթների նկատմամբ

Բաղադրություն

Պենտաֆտալային եթերային խեժ, պիգմենտներ, ուայթ սպիրիտ, սեկանտիվներ և հավելանյութեր:

Նշանակություն

Նախատեսված է մետաղական, շինարարական ներքին և արտաքին մակերեսների ներկման համար (բետոն, ցեմենտ, աղյուս, սվաղ, գիպս, գաջ, փայտ, նրբատախտակ):

Մակերեսի Նախապատրաստում

Ներկվող մակերեսը պետք է լինի մաքուր, չոր, զերծ փոշու հատիկներից և յուղային հետքերից:

Օգտագործում

- Օգտագործելուց առաջ ներկը լավ խառնել:
- Անհրաժեշտության դեպքում ներկը նոսրացնել ուայթ սպիրիտով կամ այլ բենզինային լուծիչներով:
- Աշխատանքը կարելի է կատարել վրձնով, ներկագլանով և փոշեցրիվ գործիքով:
- Ներկման աշխատանքները կատարել $+5^{\circ}\text{C}$ -ից ոչ ցածր ջերմաստիճանային պայմաններում:
- Շրջապատող օդի $+20^{\circ}\text{C}$ -ի և խոնավության 65% պայմաններում՝ երկրորդ շերտի ներկումն իրականացնել մոտավորապես 4-6 ժամ հետո:
- Աշխատանքից հետո գործիքները լվանալ լուծիչով: Օգտագործված տարաներն աղբահանել սահմանված կարգով:

Քսվող մակերեսի ջերմաստիճան	$+5^{\circ}\text{C}$ -ից $+30^{\circ}\text{C}$
Ծածկողականություն՝ մեկ շերտով (լաբորատոր պայմաններում): Ներկի ավելի ստույգ ծախսը կախված է օգտագործվող մակերեսից և նրա հարթության աստիճանից:	0.375 լ - 3-3.75 մ ²
	1 լ - 8-9 մ ²
	3.785 լ - 30-34 մ ²
	20 լ - 160-180 մ ²
Վերջնական չորացում $+20^{\circ}\text{C}$ և 65%-ից ոչ բարձր օդի խոնավության պայմաններում	36 ժամ

Փաթեթավորում

0.375լ, 3.785լ և 20լ մետաղյա տարաներ:

Պահպանում

Պահել փակ վիճակում, $+5^{\circ}\text{C}$ -ից ոչ ցածր ջերմաստիճանային պայմաններում: Պահպանման ժամկետը՝ փաթեթավորման վրա նշված արտադրման օրվանից 12 ամիս:

Ուշադրություն

- Այլ պայմաններում աշխատանքների իրականացան դեպքում վերոնշյալ ցուցիչները կարող են շեղվել:
- Արտադրողը պատասխանատվություն չի կրում աշխատանքների ոչ ճիշտ կատարման դեպքում: